

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ բնապահպանության նախարարությունը ստորև ներկայացնում է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար «Տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մարտի 30 -ին կնքված «ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/01-2/1» ծածկագրով պայմանագրում 2018 թվականի հուլիսի 13-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Պայմանավորված բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաշվեկշռում հաշվառված հին տրանսպորտային միջոցների օտարմամբ և նոր մեքենաների գրանցմամբ,
Փոփոխության նկարագրություն՝	Պայմանագրի 4.1 կետում «712000 (յոթ հարյուր տասներկու հազար)» բառերը փոխարինվել է «784604 (յոթ հարյուր ութսունչորս հազար վեց հարյուր չորս)» բառերով.
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 7.5 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Չոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-514**:

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru**:

Պատվիրատու՝ **ՀՀ բնապահպանության նախարարություն**: